#595#

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
№ 45 (145) ԳՐԱԳԱՐԱՆ № 45 (145)

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

11 NOV 2017

ՀՍՍՀ ՀԱՂՈՐԴԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄՆ ՀԱՆՐՈՒՄՈՏՔԱԼԻ
№ 45 (145) ԳՐԱԴԱՐԱՆ № 45 (145)

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ

Ցերկրորդ լրացված հրատարակություն



ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

Պետքրատի տպարան
Գլավլիտ 6838 (բ)
Հրատարակ. 1933
Գտավոր 4999
Տիրաժ 6000

Հանրապետական գրադարան
ՀԱՍՍՀ
Գրանցումներ
1-3038 գլ

Գ. Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉ ԵՆՔ ԿՈՐՑՆՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ.

Գյուղատնտեսական անասունների մահացության և հիվանդությունների հետևանքով լքնում է նրանց արդյունավետությունը և այդպիսով մեր անասնապահությունն ամեն տարի մեծամեծ վնասներ է կրում։

Միութենական Հողժողկոմատի տվյալների համաձայն, 1928 թվին հիվանդացել է 82 միլիոն գլուխ անասուն, վորն անասունների ընդհանուր քանակի 30 տոկոսն է։ այդ հիվանդացածներից սատկել են 20 միլիոն գլուխ կամ 7–8 տոկոսը։

Նույն տարին անասունների ընդհանուր արժեքն յեղել է 9 միլիարդ ռուբլի, իսկ հիվանդությունից մահացածների արժեքը՝ 520 միլիոն ռուբլուց ավելի։

Եթե վերցնենք Հայաստանի 1930 թվի տվյալները, կտեսնենք նույնպես շատ անմխիթար պատկեր։ Անցյալ տարի մեզանում վարակիչ հիվանդություններով սատակել են 17.000 գլուխ անասուն, վորոնցից սատակել են 1630 գլուխ։ Եթե անասունի միջին արժեքը հաշվենք լինենք 200 ռ., կտեսնենք, վոր անասունների մահացության հետևանքով մեր ժողովրդական տնտեսության կրած վնասը կկազմի 326 հազար ռուբլի։ Մնացած անասունները, թեև առողջացել են, սակայն հիվանդության

ընթացքում իրենց արդյունաբերությունը կորցրել են առնվազն 15 որով, վոր նմանապես շատ խոշոր կորուստ է:

Ավելի մեծ թվով անասուններ նույն 1930 թվին տառապել են վոչ վարակիչ (պարզ) հիվանդություններով: Հայաստանի շրջանային անասնաբուժարանները նույն տարվա ընթացքում ընդունել են ընդամենը 101 հազար գլուխ հիվանդ անասուն: Եթե դրանք հիվանդության հետևանքով իրանց արդյունաբերությունը կորցրած լինեն հինգ որով, այս դարձյալ անասնապահության համար հարյուրավոր հազարների վնաս է:

Սակայն մեր անասունների հիվանդության և մահացության դեպքերն արձանագրված են միմիայն այն շրջաններում, վորտեղ յեղել են անասնաբուժներ. շատ շրջաններ և գյուղեր տարվա ընթացքում մնացել են առանց անասնաբուժական ապասարկության և այդ վայրերում տեղի ունեցած հիվանդությունները և մահացությունը մնացել են առանց արձանագրելու և մեր հաշվի մեջ չեն մտնում: Այսպիսով տեսնում ենք, վոր Հայաստանի անասնապահության 1930 թվին կրած կորուստը հասնում է մեկ միլիոն ռուբլու, գուցե և ավելի:

Այդ կորուստների գլխավոր պատճառներն են անասնապահական տնտեսությունների անհատական-մանր և բաժան-բաժան լինելը, ցուրտ, խոնավ ու կեղտոտ դոմերն ու ախոռները, անբավարար խնամքը, անկանոն կերակրումը և կերի մշտական պակասը:

Հետևաբար, հիվանդությունների թիվը պակասեցնելու և անասուններին կորուստից ազատելու միակ ուղիղ ճանապարհը այդ մանր, անհատական տնտեսությունների միացումն է խոշոր կոլեկտիվ և խորհրդային

տնտեսությունների մեջ, վորտեղ կան անասունների հիվանդության և մահացության դեմ պայքարելու նպաստավոր պայմաններ: Անասնապահական և անասնաբուժական ձեռնարկումները խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում տալիս են անհամեմատ լավ արդյունքներ, քան անհատական տնտեսություններում:

Անհատական փոքր տնտեսության մեջ անասունների կենդանի քաշն ու արդյունաբերությունը ընդհանրապես շատ ցածր է. չնայած այն մեծ աշխատանքին, վոր թափվում է յուրաքանչյուր կենդանու պահպանման վրա, նրանից ստացվում է այնքան քիչ արդյունք, վոր նույնիսկ չի արդարացնում դրա համար ծախսված աշխատանքը:

Նույնն է և անասնաբուժական ապասարկության տեսակետից: Անասնաբուժը ցան ու ցրիվ, մանր տնտեսությունների մեջ աշխատելիս, բավարար արդյունք չի տալիս, վորովհետև նախ՝ իր ժամանակի մեծ մասը կորցնում է մի տնտեսությունից մյուսը տեղափոխվելու համար, ապա ցանկանալով ամեն կողմ հասնել՝ ստիպված է լինում աշխատանքի ընթացքում չափազանց շտապել և, վոր գլխավորն է, շրջանի կամ նույն իսկ գյուղի մասշտաբով մասսայական առողջապահական միջոցներ անցկացնելու հնարավորությունից զուրկ է լինում:

Այդ դրության մեջ են գտնվում խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, վորտեղ անասունների արդյունաբերությունը, ինչպես փաստերը ցույց են տալիս, անհամեմատ բարձր է և անասնաբուժական ոգնությունն էլ արդյունավետ է դառնում, վորովհետև այստեղ հնարավոր է լինում նախ կիրառելու անասունների առող-

ջատահական կանոնները և նրանց պաշտպանել վարակիչ հիվանդություններից, ապա և պետք լեղած դեպքում անասնաբուժական ոգնություն ցույց տալ:

Սորհրդային և կոլեկտիվ տնտեսություններն առաջիկայում միշտ պետք է ձգտեն վոչ միայն առաջացած հիվանդությունները կասեցնել, այլ և անասունների համար ստեղծել այնպիսի պայմաններ, վոր նրանք պաշտպանված լինեն թե վարակիչ և թե այլ հիվանդություններից, միշտ հիշելով, վոր ավելի հեշտ է և ձեռնտու հիվանդությունից պաշտպանվելը, քան այն բժշկելը:

Ի՞ՆՉ Է ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Մինիմում բառը նշանակում է՝ ամենաքիչ, նվազագույն: Անասնաբուժական մինիմում ասելով պետք է հասկանալ անասնաբուժական այն նվազագույն պահանջները, վորոնց նպատակն է անասունների առողջապահական վիճակը բարելավելով, նվազեցնել նրանց մահացությունը:

Ամենքին հայտնի յեն անասունների հիվանդության հետևանքով ժողովրդական տնտեսությանը հասած վնասները: Գյուղատնտեսության և մասնավորապես անասնապահության մեծագույն չարիքներից մեկն էլ անասունների վարակիչ հիվանդություններն են, վորոնց դեմ կազմակերպված պայքար մղելը հանդիսանում է անասնաբուժական մինիմումի նպատակը:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Անասունների վարակիչ հիվանդությունները կանխելու և նրանց դեմ հաջող պայքարելու համար նախ

պետք է իմանալ, թե ի՞նչ պատճառներ են նպաստում վարակի տարածմանը և ապա՝ ի՞նչ միջոցներով կարելի յե վոչնչացնել վարակը:

Վարակիչ հիվանդությունները, սովորաբար առաջ են գալիս աչքով անտեսանելի եյակներից, մանրեներից (միկրոբներից), վորոնք մտնելով անասունի կամ մարդու մարմնի մեջ՝ պատճառ են դառնում այս կամ այն հիվանդության:

Անասունների վարակվելու ճանապարհները բազմաթիվ են: Ցերբեմն վարակը մարմնի մեջ մտնում է հիվանդ կենդանուց անմիջապես (քսվելուց, բերան մտա լինելուց), կամ կերի և ջրի միջոցով (ընդհանուր մսուր, արոտավայր, առու կամ աղբյուր), կարող են վարակվել նաև միջատների խայթելուց (ճանճ, մոծակ, տիզ և այլն): Բայց վարակիչ հիվանդությունների տարածման ամենավտանգավոր աղբյուրը, մեր իրականության մեջ, հանդիսանում են անխնամ կերպով դուրս ընված սատկած կենդանիների դիակները:

Վերջապես, վարակիչ հիվանդությունների զարգացմանը մեծ չափերով նպաստում է նաև անասունների վատ պահվածքը (անհարմար գոմերը, ախոռները, վատորակ կերը, նեխված ջուրը) և բազմաթիվ այլ պատճառներ:

Վերահիշյալ խոշոր պատճառները դրեթե միշտ անպակաս են անհատական, մանր տնտեսությունների մեջ: Այլ վիճակի մեջ են գտնվում կոլեկտիվ տնտեսությունները, վորտեղ հնարավորություն կա թե՛ ընդարձակ ու հարմար գոմեր, ախոռներ շինելու և թե՛ անասուններին կանոնավոր ոգտագործելու, խնամելու և կերակրելու:

Ապա ուրեմն, պետք է լավ ծանոթանալ և ուշադրու-

թյամբ կերառել նախազգուշական ամենապարզ միջոցները կամ ինչպես վերևում ասացինք՝ անասնաբուժական մինիմումի պահանջները, փորոնց իրագործումը, մանավանդ կոլեկտիվ տնտեսությունների մեջ, դժվարություններ չի կարող հանդիպել:

Որքան հասատ և ճշտորեն կերառվի անասնաբուժական մինիմումը՝ այնքան ավելի ապահով կլինի արտտեսությունը զանազան վարակիչ հիվանդությունների վտանգից, ապա ուրեմն և կբարեկավվի նրա տնտեսական վիճակը:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
Անասնագերեզմանոց

Ամենքը գիտեն, որ անխնամ և անհոգ դուրս գցած դիակը նեխվելով և հոտելով՝ իր շուրջը վարակ է տարածում: Այդպիսի դիակը վարակում է թե հողը և թե ջրերը: Դիակից թափված վարակիչ հեղուկը (արյան, թարախ) չորանալով խառնվում է փոշու հետ և քամու միջոցով տարածվում հեռու տեղեր: Վայրի գազանները, շները իրենց հերթին պատառոտելով դիակը, տանում են նրա վոսկորները և այլ կտորները այս ու այն կողմ և նույնպես տարածում վարակը: Վարակը տարածելու լավ միջոցների համարն են վայելում նաև թռչունները: Վերջապես, ճանճերը և այլ միջատները նստելով դիակի վրա, իրենց թաթերով վարակը տեղափոխում են ուրիշ կենդանիների և մարդկանց վրա:

Գարշ է ուրեմն, որ անխնամ կերպով դուրս գցած մի դիակ (լինի դա խոշոր անասուն, շուն կամ թռչուն՝ մի ենթադրենք) կարող է հարյուրավոր անասունների և մարդկանց հիվանդանալու պատճառ դառնալ:

Այս ճանապարհով վարակը չտարածելու համար անասնաբուժական մինիմումը պահանջում է, որ ամեն մի բնակավայր անպատճառ ունենա հատուկ անասնագերեզմանոց:

Անասնագերեզմանոցի համար պետք է հատկացնել բարձր, բաց և չոր հողամաս, մեծ ճանապարհներից, արոտավայրերից և ջրերից հեռու: Անասուններին չի կարելի թողնել անասնագերեզմանոց արածելու, ուստի՝ նրանց մուտքը գերեզմանոց արգելելու համար անասնագերեզմանոցի շուրջը պետք է խոր փոս փորել, իսկ յեթե հնարավոր է՝ նաև շրջապատել պարիսպով կամ ցանկապատով:

Դիակները անասնագերեզմանոց տեղափոխելու համար անհրաժեշտ է ունենալ հատուկ սայլ, որն ուրիշ նպատակների համար չպետք է ոգտագործել, որովհետև դիակը տեղափոխելուց հետո սայլի վրա միշտ մնում է վարակ: Սայլը միջից պետք է պատել թիթեղով, որպեսզի հեշտ լինի հաճախակի սրբտահանել:

Անասնագերեզմանոցում պետք է միշտ նախորոք պատրաստված լինեն մի քանի գերեզմաններ, փոսեր, որպեսզի դրանց անպատրաստ լինելու պատճառով դիակը, մանավանդ ամառը, ժամերով բացօթյա չմնա:

Դիակները պետք է թաղել յերկու մետրից վոչ պակաս խորությամբ, որպեսզի վայրի գազանները և շները չհանեն և չպատառոտեն:

Դիակի մորթին, կաշին ուտելց անասնաբուժի թույլատվության չպետք է քերթել, մանավանդ սիբիրախտից սատկած անասուններինը, որովհետև տյդպիսի

մորթուց վոչ միայն անասունները, այլ և մարդիկ հեշտությամբ կարող են վարակվել:

Գիակը դուրս հանելուց հետո, գոմը կամ ախոռը, նախապես ալրի, ցամքարի և կերի մնացորդները դուրս տանելուց և այրելուց հետո, պետք է մաքրել և ախտահանել:

Այսպես ուրեմն՝ կենդանու դիակը անվտանգ դարձնելու ամենավստահելի միջոցը—այն անասնաթերեզմանոցում խորը թաղելն է:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՑԵՎ ՋՐԱՏԵՂԵՐԸ

Վարակիչ հիվանդություններից պաշտպանվելու կարևոր պայմաններից մեկն էլ արոտավայրերը, ջրատեղերը և ճանապարհները անասունների վոսկորներից, դիակներից և ուրիշ մնացորդներից մաքուր պահելն է: Սակայն հաճախ է պատահում, վոր անասունի դիակը անհոգությամբ թողնում են նրա սատկած տեղում—արոտավայրում կամ առվի մոտ և յերբեմն նույնիսկ առվի մեջ ու այդպիսով վարակվում է թե՛ արոտը և թե՛ ջուրը և պատճառ դառնում առողջ անասունների հիվանդանալուն:

Արոտավայրերի և ջրատեղերի առողջապահական պայմանները բարելավելու համար պետք է սկսել հավաքել և թաղել այս ու այն կողմ թափթփված դիակները, վոսկորները և ուրիշ մնացորդները: Պետք է հավաքել ոչ միայն խոշոր կենդանիների դիակները, այլ և խոզերի, շների, կատուների, գաղանների և թռչունների դիակները:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՆՈՐ ԳՆԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Անասուններին վարակիչ հիվանդություններից պաշտպանելու համար պետք է ժամանակ առ ժամանակ ուշադրությամբ նրանց քննել և կասկածելի անասուններին ցույց տալ անասնաբույժին և նրանից խորհուրդներ ու ցուցմունքներ ստանալ: Հնարավորության դեպքում, ավելի լավ կլինի, յեթե յերբեմն անասնաբույժը ինքը կամ բույժակը քննեն ամբողջ հոտը: Այդ յեղանակով միայն կարելի յե վորևե հիվանդություն յերևելու դեպքում՝ հիվանդ անասուններին հայտնաբերել և մեկուսացնել, վորպեսզի առողջները չվարակվեն:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել նոր գնած անասունների վրա. դրանց գոնե յերկու շաբաթ պետք է պահել առանձին չնքում և հատուկ դիտողության տակ:

Այս կանոնը պիտի շատ խիստ կիրառել, վորովհետև նոր գնած կենդանին կարող է ըստ յերևույթին, տեսքով առողջ յերևալ, բայց իրոք վարակված լինել: Յերբ անասունը վարակվում է, նա անմիջապես չի հիվանդանում, այլ մի քանի որ (1—2, յերբեմն 3 շաբաթ) անցնելուց հետո: Այս ժամանակամիջոցը կոչվում է հիվանդության «թաղուն շրջան», վորը միշտ նկատի պիտի ունենալ ուստր տեղից նոր անասուն բերելիս:

Յեթե նոր բերված անասունն արդեն վարակված է և յեթե նրան խառնենք ընդհանուր հոտին՝ արոտավայրում կամ կապենք ընդհանուր գոմում, մի քանի որից հետո նա կարող է թե՛ ինքը հիվանդանալ և թե՛ պատճառ դառնալ մյուսների վարակվելուն:

Այդ չարիքից խուսափելու համար պետք է՝ ա) նոր

անասուններ դնել վարակիչ հիվանդություններից ազատ-
հով վայրերում, նախորդը այդ մասին տեղեկանալով
շրջանային անասնաբուժից. բ) նոր անասուն դնելիս
պահանջել անասնաբուժի վկայական կենդանու առող-
ջության մասին, իսկ յեթե հնարավոր է՝ անասնաբուժի
ներկայությամբ քննել նրան. գ) նոր գնած անասունին
տնտեսություն բերելուց հետո գոմ կամ ախոռ չտանել,
այլ յերկու շաբաթ խնամել, կերակրել և ջրել առանձին
շենքում: Յեթե այդ ժամանակամիջոցում նա հիվանդա-
նա, չի կարող տնտեսության մյուս անասուններին վա-
րակել, իսկ յեթե նույն ժամանակամիջոցում առողջ
մնա՝ կարելի յե վստահ լինել, որ նա առողջ է և ընդ-
հանուր հոտին կամ նախրին խառնելն այլևս վտանգա-
վոր չե:

Այս կանոնի կիրառումը դժվարություններ չի ներ-
կայացնում, մինչդեռ օգուտը շատ մեծ է՝ ազատվելով
տնտեսությունը մեծ չարիքից:

ՀԻՎԱՆԴ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ

Վերոհիշյալ միջոցները, այլ և անասունների կանո-
նավոր խնամքը, կերակրումը և ոգտագործումը հնարա-
վոր են դարձնում կանխելու զանազան վարակիչ հիվան-
դություններ: Սակայն կան վարակի տարածման նաև
մի շարք աննկատելի ճանապարհներ, որոնցով տնտե-
սության մեջ կարող է անսպասելի կերպով յերևան
գալ այս կամ այն վարակիչ հիվանդությունը:

Այդպիսի դեպքում հիվանդությունը կասեցնելու,
կանխելու համար պահանջվում են շուտափույթ և վճռ-
ական միջոցներ, և որքան շուտ ձեռք առնվեն այդ
միջոցները, այնքան արդյունավետ կլինի հետևանքը:

Դրա համար կանոնավոր կազմակերպված տնտեսու-
թյուններում անասուններին խնամողները և կերակրող-
ները պետք է լինեն հատուկ նշանակված մարդիկ, որ-
ոնք, բացի խնամքի և կերակրման կանոնները գիտենա-
լուց, ճանաչեն վարակիչ հիվանդությունների նշանները
և կարողանան անասնաբուժական առաջին օգնությունը
ցույց տալ:

Վարակիչ հիվանդություն հայտնաբերելու կամ
կասկածի դեպքում կարևորագույն պայմանն է՝ հի-
վանդ և կասկածելի անասուններին անմիջապես ընդհա-
նուր հոտից կամ գոմից հեռացնել, և առանձին տեղ
պահել. հետո՝ նույն շենքից դուրս հանել բոլոր, առա-
ջին հերթին առողջ անասուններին, և նրանց նորից ներս
թողնել միայն շենքը մաքրելուց ու ախտահանելուց հետո:

Վարակիչ հիվանդությունների կասկածելի նշաններ
պետք է համարել.

ա) Յերբ միաժամանակ մի քանի անասուն հիվան-
դանում են միևնույն նշաններով:

բ) Յերբ անասունն առանց նկատելի պատճառների
հանկարծ հիվանդանում է, տաքությունը բարձրանում
է, բերնից լորձունք է ծորում, արյունախառն փսրված
է նկատվում, ընդհանուր կացությունը ճնշված և ախուր
է լինում:

գ) Յերբ կենդանին հանկարծամահ է լինում կամ
մի քանի ժամ հիվանդանալուց հետո սատկում է:

Այդպիսի դեպքերում հիվանդ և կասկածելի կենդա-
նիներին մեկուսացնելուց հետո, անմիջապես պետք է
դիմել անասնաբուժին կամ բուժակին, որը հիվանդու-
թյունը վորոշելով՝ անհրաժեշտ ցուցմունքներ կտա
նրա առաջն առնելու համար:

ՎԱՐԱԿՎԱԾ ՇԵՆՔԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Այն շենքը, վորի մեջ վորևե անասուն ե հիվանդացել կամ սատակել, անհրաժեշտ ե մաքրել և ապա ախտահանել:

Դրա համար պետք ե հավաքել ու դուրս տանել աղբը և կերի մնացորդները և, յեթե պարզվի, վոր անասունը սատակել ե սիբիրախից, այրել կամ անասնադերեզմանոցում թաղել: Ուրիշ հիվանդությունների դեպքում աղբը կարելի յե օգտագործել, յեթե աղբակույտը վերևից ծածկվի դարմանով, և ապա հողով կամ ավազով: Մի ցերկու շաբաթվա ընթացքում տաքացած աղբի մեջ վարակը վոչնչանում ե և այնուհետև առանց յերկյուղի կարելի յե աղբն օգտագործել իբրև պարարտանյութ:

Շենքերն ախտահանելու համար գործ են ածում զանազան քիմիական լուծույթներ, վորոնցից ամենագործածականը՝ կրակաթն ե: Կրակաթ պատրաստելու համար պետք ե վերցնել մի մաս թարմ հանդցրած կիր և լավ խառնել 10–12 մաս ջրի մեջ. կրակաթով կարելի յե ապխտակեցնել նաև պատերը, յեթե լուծույթն ավելի թանձր պատրաստված լինի (1 մաս կիր և 3—4 մաս ջուր):

Բացի դրանից, ախտահանության համար գործածում են կարբոլյան թթվի և կամ կրեսլինի լուծույթ (1 մասը՝ 20 մաս ջրի մեջ լուծված) սուլեմայի լուծույթ (1 մասը՝ 500—1000 մաս ջրի մեջ), մասնավորապես զարաղի դեմ շատ վստահելի յե համարվում ֆորմալինի լուծույթը (1 մասը՝ 100–200 մաս ջրի մեջ):

Ախտահանելուց առաջ շենքը պետք ե լավ մաքրել և, վոչինչի փոշի չբարձրանա, լավ և նախորդը պատերը և հատակը առատորեն թրջել կրակաթով կամ մոխրաջրով:

Այդ ձևով մաքրելուց հետո, պատերը, հատակը և շենքի մեջ գտնված բոլոր առարկաները սրսկում են ախտահանիչ լուծույթով: Սրսկելու համար կարելի յե գործածել սովորական դյուղատնտեսական սրսկիչ, վորը գործածվում ե խաղողի վազերը բժշկելու համար:

Ախտահանությունից հետո շենքի դռները և պատուհանները պետք ե բաց թողնել 5—6 որ, վորից հետո միայն կարելի յե շենքը վարակման տեսակետից անվտանգ համարել:

Ախտահանությունը ամենակարևոր միջոցն ե վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար, ուստի այն պետք ե կատարել մեծ ուշադրությամբ, ճշտությամբ և անաչառությի ցուցմունքներով:

Անկանոն կատարած ախտահանությունը յերբեք իր նպատակին չի ծառայում:

Անկախ այն հանգամանքից, թե հիվանդանալու դեպքեր պատահել են, թե վոչ, կանոնավոր կազմակերպված տնտեսություններում ինքնապաշտպանության նպատակով, անասունների և թռչունների շենքերը պետք ե ախտահանել տարեկան գոնե 2 անգամ: Այլ և պետք ե պատերը սպիտակեցնել և հետևել մշտական մաքրությունը՝ չիթոցներով, վոր գոմում աղբի կուտակում և մեղի լճացում առաջանա:

ԼԱՎ ՏԱՎԱՐԱԾԻ ՑԵՎ ԶՈՐԱՆԻ ԴԵՐԸ

Նախիրը և հոտը զանազան հիվանդություններից պաշտպանելու համար շատ մեծ դեր ունեն կատարելու տափաստանն ու չոբանը:

Նախերն ու հոտը տարվա մեծ մասը անց են կացնում արոտավայրում, վորտեղ անասուններն իրար հետ մշտական շփման մեջ լինելով՝ զանվում են վարակվելու համար նպաստավոր պայմանների մեջ: Բացի դրանից, չնայած արոտավայրում հայտնաբերվում է վորևե վարակիչ հիվանդություն, արոտավայրը ևս վարակվում է, և այնուհետև ամբողջ հոտը մեծ վտանգի յի մատնվում: Ապա ուրեմն վո՞ւրքան հմուտ և հեռատես պետք է լինի անասուններին արածացնողը, վոր միշտ խուսափի անապատելի չարիքից:

Գյուղացիության մեջ սովալ հայացք է տարածված տավարածի կամ չոբանի պարտականությունների մասին: Սովորաբար այդ պաշտոնին նշանակում են ամենա անընդունակ մեկին, իսկ շատ անգամ՝ նույնիսկ ապուշ կամ միամիտ մարդկանց, յենթադրելով, վոր նրա պարտականությունները շատ պարզ են և հեշտ, այսինքն պետք է միայն հսկի, վոր հոտից անասուն չիորչի:

Այն ինչ նույն գյուղացիությունը 500 ռուբլի պարունակող հասարակական դրամարկղը յերբեք չի համաձայնի հանձնարարել մի միամիտ մարդու հսկողությանը՝ կասկածելով, վոր սխալմունքի կամ միամտության հետևանքով կարող է դրամը պակասել կամ կորչել: Մինչդեռ, 150—200 դլուխ, իսկ յերբեմն և ավելի մեծ հասարակական հոտը, վոր անտեսության կենդանի դրամարկղն է և տասնյակ հազարների արժեք ունի՝ դիտակցաբար հանձնում է միամիտ մարդու:

Այն ինչ, լավ չոբանը պետք է հոտի իսկական առաջնորդը լինի և կարգադրիչը: Նա լավ ուսումնասիրած պետք է լինի արոտավայրը և դիտենա, թե

վո՞ր տեղ կարելի յե պահել հոտը, ո՞ւր և յե՞րբ տեղափոխել, ի՞նչ տեղերից պետք է խուսափել: Չոբանը պետք է սիրի անասուններին և դիտելով՝ հասկանա անասունի մեջ նկատված փոփոխությունը. նա իր փորձված աչքով ամբողջ հոտի միջից պետք է անմիջապես նկատի հիվանդ անասունին և իսկույն նրան առողջներից առանձնացնի: Վերջապես նա պետք է ծանոթ լինի վարակիչ հիվանդությունների նշաններին և դիտենա անասնաբուժական սկզբնական ողնության ձևերը:

Պարզ է ուրեմն, վոր տավարածի կամ չոբանի ընտրությունը պետք է կատարել մեծ ուշադրությամբ և հոտի հսկողությունը հանձնարարել ընդունակ և վստահելի մարդու:

Լավ չոբան կամ տավարած ունենալու համար նրա պատասխանատվությամբ և նախորոք մի ամսով ուղարկել նրան չոբանի անասնաբուժարանը, վորտեղ նա մասնագետից կարող է սովորել անասունների առողջապահության տարրական կանոնները, հիվանդությունների նշանները և առաջին ողնություն ցույց տալու յեղանակը:

Առանց այդպիսի գիտությունների, տավարածը կամ չոբանն յերբեմն առաջին ողնությունն և հասցրնում «ըստ իր հայեցողության» և հաճախ փոխանակ հոնքը շինելու, աչքն ել է հանում:

Պրանք են անասնաբուժական մինիմումով նախատեսված կարևորագույն պահանջները գյուղացիության և իշխանության տեղական ներկայացուցիչների համար: Թերի այդ տարրական պահանջները ճշտիվ և անխախտելիորեն՝ անասունների վարակիչ հիվանդությունները մեծի սպասելի չափով կպակասեն:

1-3038 ցպ

ԽՈՐՀ. ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Այժմ որ ըստ որե ամում են կոլեկտիվ և խորհ. տնտեսությունները, վորոնք այլևս չեն սահմանափակվում միմիայն անասնաբուժական մինիմումով, այլ իրենց համար պարտադիր են համարում անասուններին վարակիչ հիվանդություններից պաշտպանելու համար դարձնել մի շարք անասնաբուժական այլ միջոցներ:

Այդ միջոցներն են՝

1. Առանց անասնաբուժի թույլտվության հիվանդ անասունը չծախել և չմորթել իբրև մսացու:

2. Արգելել հիվանդ անասուններին խնամող բանվորների մուտքը առողջ անասունների մոտ:

3. Անասնաբուժի միջոցով պարբերաբար ստուգել և քննել անասունների առողջությունը:

4. Անասուններին մշտապես մաքրել և նրանց վրայի ախտերը հավաքել:

5. Անասուններին չափով կերակրել և կերի փորակը միշտ ստուգել:

6. Ջրելու համար ընդհանուր դույլեր չգործածել:

7. Անասնաբուժական հարցերը տնտեսության կուլտ-կրթական աշխատանքի ծրագրի մեջ մտցնել:

Անասնաբուժական մինիմումի պահանջները ավելի ևս խստանում են հատուկ անասնաբուժական խորհ. տնտեսությունների և կոլտնտեսությունների համար:

Վորո՞նք են այդ պահանջները:

Անասնաբուժական տնտեսության համար հատկացրած հողամասը պետք է քննության յենթարկել անասնաբուժական տեսակետից:

Անասնաբուժական տնտեսության համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի հողամաս, արոտավայր և ջրատեղ, վորոնք ապահով լինեն այլ և այլ վարակներից:

Շատ դեպքերում հողամասի ընտրությունը չատ անհաջող է լինում և վնասակար հետևանքներ ունենում: Այսպես, որինակ՝ մոտիկ անցյալում, վոչխարաբուծական տնտեսություններից մեկը ճահճոտ և ճիճուներով վարակված հողամասի վրա հիմնելով իր տնտեսությունը՝ կարճ ժամանակամիջոցում վոչխարների կեսը կորցրեց:

Այդպիսի չարիքներից խուսափելու համար, անհրաժեշտ է հողամաս ընտրելիս անպատճառ խորհրդակցել շրջանային անասնաբուժի հետ, վորովհետև նա միշտ տեղյակ է թե իր շրջանի վոր տեղերում են նկատվում այս կամ այն վարակիչ հիվանդությունները:

Նույնպես և անասունների համար նոր շենքեր կառուցելիս պետք է անասնաբուժի հետ խորհրդակցել, վորովհետև շենքի բարձրությունը, լույսը, հատակը, ոդի ծավալը, մուրների դիրքը և ուրիշ, ըստ յերևույթին փոքր պայմաններ, մեծ ազդեցություն ունեն անասունների առողջական դրության և նրանց արդյունավետության վրա:

Բացի դրանից, խորհ. և կոլ. տնտեսություններում, անասունների կերակրման և ոգտագործման կանոնների հետ զուգընթացաբար պետք է կիրառվեն առողջապահական կանոններ՝ անասուններին մաքրելու, խնամելու, կթելու ձևի և այլնի նկատմամբ:

Միմիայն այդ պայմաններում տնտեսությունը կարող է տալ առավելագույն արդյունքը և պահպանել իր անասունների առողջությունը:

Անասնաբուժական մինիմումը պահանջում է նաև, որ անասուններին խնամող բանվորները ծանոթ լինեն խնամքի կանոնների և անասնաբուժական ընդհանուր հիմունքների հետ, և որպես պատահական մարդիկ, լինեն, ինչպես հաճախ տեսնում ենք ներկայումս:

Վերջապես ցանկալի է, որ խոշոր անասնաբուծական խորհ. տնտեսությունները և կոլտնտեսությունները ապահովված լինեն մշտական անասնաբուժով կամ դառնա անասնաբուժակով: Այդպիսի տնտեսությունները պետք է ունենան անասնաբուժարան՝ իր դեղատնով և առանձին շենք—մեկուսարան, կասկածելի կամ վարակիչ հիվանդ անասուններին մեկուսացնելու համար:

Փոքրն միմիայն խորհ. և կոլ. տնտեսությունների կողմից անասնաբուժական մինիմումի կիրառումը չի կարող կատարելապես ապահովել և պաշտպանել անասուններին վարակիչ հիվանդություններից, որովհետև կան մի շարք արդյունաբերական կազմակերպություններ, որոնց գործունեությունը՝ կապված լինելով անասունների և հումքի մթերման ու վերամշակման հետ՝ նույնպես պահանջում է անասնաբուժական հատուկ կանոնների գործադրում:

ՄԹԵՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Անասունների և հումքի մթերման գրաֆիկի մասին նախորդը պիտի իրազեկ անել անասնաբուժական վարչությանը, որպեսզի մթերման վայրերը վերջի-

նիս կողմից հատուկ հսկողության և ուշադրության առնվեն:

2. Եթե մի վորևե վայրում գոյություն ունի անասունների վարակիչ հիվանդություն, մթերողները անմիջապես պետք է դադարեցնեն մթերումները:

Սակայն, դժբախտաբար, պետք է խոստովանել, որ այս հիմնական կանոնը հաճախ խախտում են մթերող կազմակերպությունները, աչքի առաջ ունենալով միայն իրենց ձեռնարկության շահերը և հաշվի չառնելով վնասակար հետևանքները: Բացառիկ չեն այնպիսի դեպքեր, երբ այդպիսի կազմակերպությունները, հակառակ անասնաբուժական հսկող արգելքին՝ դիմում են իշխանության բարձրագույն մարմիններին և հազար ու մի պատճառաբանություններով ինդրում են թույլատրել շարունակել մթերումները:

3. Մթերողները պետք է հոգան, որ անասնահավաքատեղերը և հումքի պահեստներն ապահովված լինեն հատուկ և նպատակահարմար շենքերով:

4. Մթերած անասունների մեջ կասկածելի հիվանդություն հայտնաբերելիս՝ պետք է հիվանդներին առանձնացնել և ապա դիմել անասնաբուժին՝ հիվանդության բնույթը վերջնական և միջոցներ ձեռք առնելու համար:

5. Կոնտրակտացիայի կարգով մթերվող անասունների նկատմամբ՝ պայմանագրի մեջ հատուկ կետով պետք է նախատեսել, որ անասնատերը պարտավոր է կատարել անասնաբուժական հսկողության պահանջները:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Անասունները վարակիչ հիվանդություններից պաշտպանելու կամ նրանց զարգացման առաջն առնելու համար, բացի անասնաբուժական մինիմումի պահանջների իրականացնելից, պետք է կազմակերպել նաև անասնաբուժական կանոնավոր սպասարկություն և այն մոտեցնել խորհ. և կոլ. տնտեսություններին:

Որքան շատ լինեն անասնաբույժներ և անասնաբուժակներ և որքան անասնաբուժարանները լավ ապահովված լինեն գործիքներով, դեղորայքով և տեղափոխության միջոցներով, այնքան գգալի կլինի անասնաբուժության տված ոգուտը:

Խորհրդային Հայաստանի սահմաններում ներկայումս աշխատում է 25-ի մոտ անասնաբույժ և մոտ 80 անասնաբուժակ: Ամեն մի անասնաբույժի ընկնում է 50-60 հազար գլուխ անասուն. պարզ է, որ վոչ մի անասնաբույժ հնարավորություն չի ունենա կանոնավոր կերպով սպասարկել այդ քանակության անասուն: Այժմ ամեն մի հիվանդ անասուն բժշկելու համար ծախսվում է 4-6 կոպեկ, այն ինչ անհրաժեշտ է 30-35 կոպեկ:

Ապա ուրեմն, անհրաժեշտ է բարելավել անասնաբուժական սպասարկությունը, ավելացնելով մասնագետների թիվը և հատկացնելով տեղական բյուջեյից բավարար միջոցներ: Եթե այդ ծախքերը միանգամայն կարդարացնեն իրենց, կարվաճառ տրելով հազարավոր գլուխ անասուն:

ՊՐԱՊԱԼԱՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0866609

ԹԻՆԸ 15 ԿՈՊ. (³/₄ մ)

1931
1
3038

Г. АРУТЮНЯН

ВЕТЕРИНАРНЫЙ МИНИМУМ

Госиздат ССР Армении
Эривань 1931